Քննարկվել է Նիգավանի միջն.
դպրոցի մանկավարժական
խիվ 1 նիստում 29.08.2022թ.

Նիգավանի միջնակարգ դպրոցի
Տնօրեն՝ Մ. Մանվելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐ

<<2022-2023>> ուսումնական տարի

Նիգավանի միջնակարգ դպրոց

Տարրական կրթության մեթոդական միավորման

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել մայրենի, մաթեմատիկա, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա առարկաների դասավանդումը դպրոցում:

Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական – մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական – մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման , ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով:

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը՝ ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը դասավանդման ընթացքում:

Հատուկ ուշադրություն դարձնել հեռավար դասերի ճիշտ կազմակերպմանը, դասերի ժամանակ երեխաների կեցվածքին, համակարգչից ճիշտ օգտվելու կանոնների իմացությանը:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ
1	2	3	4	5
1	Մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում	2022թ. օգոստոս սեպտեմբեր	Մասնախմբի ղեկավար	
2	Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի կազմում, ուսումնական պլանների, նախագծերի քննարկում	2022թ. օգոստոս սեպտեմբեր		
3	Մեթոդմիավորման աշխատանքային պլանի քննարկում և հաստատում	2022թ. օգոստոս սեպտեմբեր	Մասնախմբի ղեկավար	
4	Առարկայական թեմատիկ պլանների քննարկում և հաստատում	2022թ. սեպտեմբեր	մասնախմբի ղեկավար	
5	Քննարկել և հաստատել ուսուցիչների թեմատիկ ծրագրերը, որոնց մեջ ընդգրկված են արդեն հստակեցված գրավորների քանակը	2022թ. օգոստոս սեպտեմբեր		
6	Համադպրոցական ուսումնական պլանի պետական և դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխում	2022թ. օգոստոս սեպտեմբեր	Մասնախմբի ղեկավար	
7	Էլեկտրոնային մատյանը/ emis.am / վարելու կարգի ներկայացում:	Սեպտեմբեր	մասնախմբի ղեկավար	
8	Մեթոդմիավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
9	Մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն			
10	Ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար	
11	Ծանոթացնել մասնախմբի անդամներին ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար	
12	Դասասենյակների կահավորում, ստենդների թարմացում	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
13	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	

14	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
15	Պահպանել գրավոր աշխատանքների քանակի, ծավալի միասնական պահանջները, գրավոր աշխատանքների ժամանակին ստուգումը՝ ստուգման կարգի նորմաներին համապատասխան	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար	
16	Հետևել համացանցի www.armedu.am, www.libarmedu.am, www.aniedu.am , ԿԶՆԱԿ-ի կայք էջերին, մասնագիտական ամսագրերին և քննարկել	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
17	Համագործակցել «Իմ դպրոց», www.dasaran.am կայքերի հետ: Քննարկել էլեկտրոնային մատյանում գրանցումներ կատարելու հարցերը	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
18	Կազմել 2022-2023 ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանը	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
19	Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում, օրվա պլանների ստուգում	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
20	Հեռավար դասերի արդյունավետ կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ դասընթացներին ուսուցիչների մասնակցության ապահովում: Zoom, Teams, quizizz, youtube, viber, messenger և այլ հարթակներից օգտվելու ուսուցիչների կարողության ապահովում	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար, անդամներ	
21	Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում	2022թ. դեկտեմբեր, 2023թ.մայիս	մասնախմբի ղեկավար	
22	Կարդալու տեխնիկայի ստուգում 2-4- րդ դասարաններում	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
23	Ուսուցիչներին նախապատրաստել հերթական ատեստավորմանը	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
24	Օգնել սկսնակ ուսուցիչներին	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
25	Տանել հետևողական աշխատանք աշակերտների բանավոր խոսքի զարգացման, ինքնուրույնության, ստեղծագործական մտքի զարգացման ուղղությամբ	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
26	Սովորողներին ներգրավել ««Մեղու», «Կենգուրու» ամենասպասված մրցույթներին	Ուստարվա ընթացքում/հոկտեմբեր, նոյեմբեր, մարտ/	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
27	Վերահսկել 1-4 դասարանների սովորողների հաճախումները, բացակայությունների բնույթը, վարքը, առաջադիմությունը	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար	

28	Կազմել դասարանական ծնողական ժողովների ժամանակացույցը	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
29	Հետևել սովորողների անձնական հիգիենայի,առողջ ապրելակերպի, սնման մշակույթի ձևավորմանը	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
30	Կազմակերպել անհատական աշխատանք տարրական դասարաններում դժվար դաստիարակվող, առողջական խնդիրներ ունեցող և անապահով պայմաններում գտնվող ռիսկային խմբերի սովորողների հետ	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
31	Ուշադրության կենտրոնում պահել չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
32	ԿԱՊԿՈՒ սովորողների կրթությունը կազմակերպել «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հաստատության 2022-2023 ուստարվա օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա, յուրաքանչյուր սովորողի համար կազմել ԱՈՒՊ: Համագործակցել դպրոցի հոգեբանի և ուսուցչի օգնականի հետ	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
33	Կազմել առարկայական ծրագրերի կատարողական հաշվետվություն, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
34	Սովորողների դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների , մեթոդների քննարկում, կիրառում:	Ուստարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
35	4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում	Մայիս	Մասնախմբի ղեկավար և անդամներ	
36	1-ին և 2-րդ կիսամյակի աշխատանքների վերլուծություն՝ կատարած աշխատանքների ձեռքբերումներն ու բացթողումները	2022թ. դեկտեմբեր, 2023 թ. մայիս	Մասնախմբի ղեկավար և անդամներ	

Դասարանական աշխատանքներ

հ/հ	Անվանումը	Կատարող անձ	Դասարանը	Կատարման ժամկետը	Նշումներ
1.	Ինչպես պաշտպանել մեզ և մեր մտերիմներին կորոնավիրուսից	Դասվարներ	I – IV դասարաններ	Սեպտեմբեր	
2.	«Անկախության տոն»	Դասվարներ	I – IV դասարաններ	Սեպտեմբեր	
3.	«Շնորհավոր տոնդ, ուսուցիչ»	Դասվարներ	I – IV դասարաններ	Հոկտեմբեր	
4.	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	Դասվարներ	I – IV դասարաններ	Նոյեմբեր	
5.	Իմ դպրոցը	Դասվարներ	I – IV դասարաններ	Դեկտեմբեր	
6.	Հայոց բանակի օր՝ ծաղիկներ հուշաղբյուրին	Դասվարներ	I – IV դասարաններ	Հունվար	
7.	Գիրք նվիրելու օր: Հարստացնենք դպրոցի գրադարանը	Դասվարներ	I – IV դասարաններ	Փետրվար	
8.	Թանգարանային օրեր	Դասվարներ	I – IV դասարաններ	Տարվա ընթացքում	
9.	Պաստառների ստեղծում, ձևավորում	Դասվարներ	I – IV դասարաններ	Տարվա ընթացքում	
10.	Թատերական ներկայացումների դիտում, քննարկում	Դասվարներ	I – IV դասարաններ	Տարվա ընթացքում	
11.	Գեղեցկության, մայրության միամսյակ	Դասվարներ	I – IV դասարաններ	Մարտ, ապրիլ	
12.	Խաղաղության դասեր	Դասվարներ	I – IV դասարաններ	Ապրիլ	
13.	Շաբաթօրյակների կազմակերպում	Դասվարներ	I – IV դասարաններ	Տարվա ընթացքում	